Ա. Ռ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հայրենական պատմագիտությունը մեծ կորուստ կրեց. 84 տարեկան հասակում կյանքից հեռացավ Հայաստանի գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, նշանավոր հայ պատմաբան Արդար Ռուբենի Հովհաննիսյանը։

Ա. Ռ. Հովհաննիսյանը ծնվել է 1908 թ., Թբիլիսիում։ 1938 թ., 30 տարեկան հասակում, նա պաշտպանել է դոկտորական թեզ, եղել է պրոֆեսոր, ամբիոնի վարիչ, իսկ ավելի ուշ, 1947—1953 թթ., Երևանի պետական համալսարանի պրոռեկտոր։

Արդար Հովհաննիսյանի կյանքը անխախտելիորեն կապված է Հայաստանի գիտությունների ակադեմիայի հետ։ 1940—1960 թթ.՝ հանդիսանալով հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, իսկ 1960—63 և 1967—1987 թթ. Հայաստանի գիտությունների ակադեմիայի փոխպրեզիդենտ, նա մեծ ավանդ է ներմուծել հասարակական գիտությունների զարգացման և գիտական կադրերի պատրաստման բնագավառում։ Մեծ է Ա. Ռ. Հովհաննիսյանի անձնական ներդրումը պատմագիտության մեջ, որը նա հարստացրել է բազմաթիվ արժեքավոր հետազոտություններով։ Ունենալով գիտելիքների լայն մտահորիզոն, բազմապրոֆիլ հետաքրքրություններ, տիրապետելով բազմաթիվ եվրոպական լեզուների, նա հետազոտել է մի շարք պատմական պրոբլեմներ՝ հայ-ռուսական հարաբերություններից մինչև ֆրանսիական մեծ հեղափոխություն և ուտոպիական սոցիալիզմ։

Հայագիտության բնագավառում Ա. Ռ. Հովհաննիսյանի արդյունավետ աշխատանքը հնարավորություն է տվել ընդհանրացնել հայ ժողովրդի XVIII դարի վերջի և XIX դարի սկզբի պատմության հիմնական պրոբլեմները։ Այդ պրոբլեմներն արտացոլվել են նրա արժեքավոր աշխատություններում, ինչպիսիք են «Հովսեփ Էմին», «Ռուսաստանը և հայ ազատագրական շարժումները XVIII դարի 80-ական թթ.», «Անդրկովկասի միացումը Ռուսաստանին և միշազգային կացությունը XIX դարի սկզբին» և այլ աշխատություններ։

Ֆրանսիայում մեծ ճանաչման և դեհատանքի են արժանացել Ա. Ռ. Հովհաննիսյանի ֆրանսիական մեծ հեղափոխությանը և ուտոպիական սոցիալիզմին նվիրված արժեքավոր աշխատությունները։

Լինելով այդ հարցերի նշանավոր հետազոտող Վ. Պ. Վոլգինի աշակերտը և հետևորդը, Ա. Ռ. Հովհաննիսյանը պատմագիտության այդ բնագավառը հարստացրել է յուրահատուկ հետազոտությունների մի ամբողջ շարքով, ինչպիսիք են «Շարլ Ֆուրիե», «XIX դարի ֆրանսիական ուտոպիական կոմունիզմի պատմության մասին» և այլ աշխատություններ, որոնց զգալի մասը հրապարակվել է ֆրանսիական գիտական հրատարակություններում։

Ա. Ռ. Հովհաննիսյանը բազմիցս և մեծ արժանապատվությամբ հայ պատմագիտությունը ներկայացրել է ինչպես Մոսկվայում, այնպես էլ տարբեր արտասահմանյան երկրներում, հանդես գալով բազմաթիվ միշազգային գիտական կոնգրեսներում և համաժողովներում։

Լինելով բարձր կուլտուրայի տեր մարդ, տիրապետելով բազմաթիվ լեզուների, Ա. Ռ. Հովհաննիսյանը իրենից ներկայացրել է իսկական զիտնականի, մտավորականի կերպար։

Արդար Հովհաննիսյանը Հայաստանի Հանրապետության գիտության վաստակավոր գործիչ էր, ակադեմիկոս Վոլգինի անվան մրցանակի դափնեկիր։

Ա. Ռ. Հովհաննիսյանի հիշատակը հավերժ կմնա մեր սրտերում։

ՀԳԱ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ